

---

## Ձեռնարկ ԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

### ԳԱՐԵԳԻՆ ՇՄԱԿՈՆՅԱՆ

Սոցիալ-տնտեսական բարեփոխումների արդի փուլում մեծապես արժևորվում է ժողովրդի բարեկեցության բարձրացման և մակրոտնտեսական կայունության ապահովման հիմնախնդիրները հաշվեկշռված լուծելու անհրաժեշտությունը: Սակայն բնակչության կենսամակարդակի բարձրացման տնտեսական քաղաքականությունը անկարելի է պատկերացնել առանց տնտեսական աճի խրախուսման, զբաղվածության ընդլայնմանը միտված տնտեսական ռազմավարության մշակման և արդյունավետ իրականացման: Այս առնչությամբ պետք է արձանագրել այն իրողությունը, որ տնտեսական աճ ապահովելու, բարենպաստ ձեռնարկատիրական միջավայր ձևավորելու հիմնահարցերի լուծումը կարող է խարսխվել միմիայն բիզնեսամետ հարկային քաղաքականության վրա:

Ներկայումս չափազանց կարևոր է գիտակցել այն մտքի ճշմարտացիությունը, որ մեր երկրում այլևս սպառված է հարկային համակարգի անպտուղ «բարեփոխումների» իրականացման, հարկային վարչարարության արդյունավետությունը անընդհատ բարձրացնելու մասին տասնամյակներ շարունակվող սին դատողությունների ժամանակը: Կառավարությունը, մեր կարծիքով, պետք է ընդունի այն փաստը, որ հարկային վարչարարության անընդհատ «կատարելագործումը» չի նպաստում և չի էլ կարող նպատել ձեռնարկատիրության սուբյեկտների արտադրանքի (ծառայությունների) իրացման ծավալների էական ավելացմանը, ստվերային շրջանառության կրճատմանը և այդ հիմքի վրա՝ բյուջեների հարկային եկամուտների էական աճին, քանի որ այժմ առավելապես գործում է հարկերի ֆիսքալ գործառույթը, իսկ կարգավորիչ, ի մասնավորի՝ խթանիչ գործառույթը կիրառվում է, այն էլ ոչ նշանակալի ազդեցությամբ, տնտեսության առանձին հատվածների կամ ենթահատվածների զարգացման ապահովման նպատակադրումով: Մինչդեռ հարկերի խթանիչ գործառույթը պետք է կիրառվեր հենց ամբողջ տնտեսության (և ոչ թե դրա հատվածների) նկատմամբ՝ ըստ այդմ կանխորոշելով դրա զարգացումը խրախուսելու քաղաքականության կենսագործումը:

Սակայն անհրաժեշտ է իմաստավորել երկրի ամբողջ տնտեսության զարգացմանը, տնտեսական աճի ինտենսիվացմանը միտված գրավիչ բիզնես միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ արմատական հարկային բարեփոխման հրատապությունը և բացահայտել վերջինս պայմանավորող հետևյալ խորքային գործոնները.

♦ Հայաստանի Հանրապետությունից բնակչության շարունակվող արտագաղթը, որը չկասեցնելը լրջագույն սպառնալիք է երկրի ազգային

անվտանգությանը և անգամ անկախությանը, ուստի անհրաժեշտ է բոլոր մարզերում իրականացնել բնակչության զբաղվածության աճը խթանող անհետաձգելի հարկային բարեփոխումներ,

♦ մրցունակ տնտեսություն և հետևապես մրցունակ պետություն ստեղծելու կարևորությունը, ինչը բխում է նաև երկրի ոչ բարենպաստ աշխարհաքաղաքական պայմաններից, կիսաշրջափակված վիճակից,

♦ հանքահումքային ռեսուրսաապահովվածության մակարդակը,

♦ ստվերային տնտեսության շեշտակի կրճատման հրամայականը,

♦ հարկային մարմիններում կոռուպցիայի նվազեցման հիմնախնդիրը,

♦ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և երկրի գործադիր իշխանության՝ իրավիճակին ոչ համարժեք քայլերի հետևանքով Հայաստանի Հանրապետության տնտեսությանը հասցված մեծ վնասի հետևանքների վերացման պահանջը:

Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում վերաարժևորել հանրապետությունում տարվող հարկային քաղաքականության շեշտադրումները՝ հաշվի առնելով համաշխարհային տնտեսությունում ներկայումս նկատվող բացասական միտումները և դրանց հնարավոր ազդեցությունը ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վրա, ինչպես նաև՝ երկրի հարկային համակարգի ներկայիս վիճակի իրատեսական գնահատման կարևորությունը և դրան վերաբերող հիմնախնդիրների բարդությունն ու լուծման ռիսկայնությունը:

ՀՀ անկախության ավելի քան 20 տարվա ժամանակաշրջանը արձանագրեց հարկային համակարգի ոչ միայն ձևավորումը և կայացումը, այլև դրա գործառնման արդյունավետության ոչ բարձր մակարդակը: Դա պայմանավորված է այն անժխտելի փաստով, որ հանրապետությունում չկազմավորվեց բիզնեսի զարգացումը և տնտեսական աճը խթանող հարկային համակարգ: Հարկային ոլորտի պատասխանատուները տարիներ շարունակ հայտարարագրել են հանրապետության տնտեսությունում ստվերային տնտեսության նշանակալի կրճատմանը և ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազմանը միտված պայքարի իրականացման, հարկային բեռի հավասարաչափ բաշխման կարևորության մասին, սակայն ցայսօր այս ասպարեզում չեն արձանագրվել լուրջ ձեռքբերումներ, դեռևս բավականին ցածր է հարկային վարչարարության մակարդակը: Դրա մասին է վկայում այն խոսուկ փաստը, որ դիտարկվող վերջին 10 տարում չի հաջողվում էականորեն ավելացնել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 2002-2011 թթ. նշված ցուցանիշը աճել է ընդամենը 3.3 տոկոսային կետով՝ կազմելով 17.2%: Ընդ որում, եթե հիշյալ ժամանակաշրջանի առաջին 5 տարվա ընթացքում (2002-2006 թթ.) այս ցուցանիշը աճել էր ընդամենը 0.2 տոկոսային կետով, ապա ՀՆԱ-ում ավելացված արժեքի հարկի մասնաբաժինը կրճատվել էր 0.3, ակցիզային հարկինը՝ 1.0 տոկոսային կետով, իսկ գույքահարկի ու հողի հարկի տեսակարար կշիռները մնացել էին անփոփոխ: Այդուհանդերձ պետք է նկատել, որ նշված 10 տարվա ընթացքում մոտ 26.1%-ով աճել է ՀՆԱ-ում հիմնական անուղղակի հարկի՝ ԱԱՀ-ի տեսակարար կշիռը, 116.7%-ով՝ շահութահարկի և 144.4%-ով՝ եկամտահարկի մասնաբաժինը՝ ՀՆԱ-ում ընդհանուր հար-

կային եկամուտների բաժնի ընդամենը 23.7%-ով ավելանալու դեպքում, ինչը վկայում է հիմնականում բիզնեսների գործունեության ֆինանսական արդյունքների մեծացման հետ առնչություն ունեցող հարկային եկամուտների ավելացման և տնտեսական աճի մասին:

**Աղյուսակ 1**

**Հարկային եկամուտները և դրանց մասնաբաժինը ՀՆԱ-ում 2002-2011 թթ.<sup>1</sup>**

	2002		2003		2004		2005		2006	
	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում
Հարկային եկամուտներ	190025.0	13.9	218278.3	13.4	257520.0	13.5	312316.0	13.9	375537.2	14.1
Ավելացված արժեքի հարկ	95006.1	6.9	107768.9	6.6	117903.3	6.2	146782.5	6.5	165912.2	6.2
Ակցիզային հարկ	35333.9	2.5	39104.2	2.4	40656.7	2.1	38628.1	1.7	39858.1	1.5
Շահութահարկ	17428.8	1.2	17627.1	1.1	32010.8	1.7	46556.8	2.1	65329.1	2.5
Եկամտահարկ	12486.8	0.9	16780.5	1.0	20413.4	1.1	26615.5	1.2	35468.7	1.3
Գույքահարկ	3140.2	0.2	4022.7	0.2	4930.1	0.3	5739.6	0.3	6613.3	0.2
Հողի հարկ	1506.9	0.1	2046.7	0.1	2360.1	0.1	2324.1	0.1	2748.6	0.1
Հաստատագրված վճարներ	6365.4	0.4	8008.8	0.5	11742.2	0.6	12962.9	0.6	15074.2	0.6
Պարզեցված հարկ	-	-	4951.9	0.3	7177.8	0.4	6745.3	0.3	7674.5	0.3

	2007		2008		2009		2010		2011	
	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում	Մլն դրամ	%-ով ՀՆԱ-ում
Հարկային եկամուտներ	494420.8	15.7	610422.3	17.1	518544.1	16.5	589900.9	17.0	647807.6	17.2
Ավելացված արժեքի հարկ	248007.1	7.9	318313.0	8.9	254158.1	8.1	301724.5	8.7	328482.8	8.7
Ակցիզային հարկ	41546.9	1.3	45878.5	1.3	42767.1	1.4	48140.5	1.4	39404.5	1.0
Շահութահարկ	75503.6	2.4	86212.2	2.4	80800.5	2.6	77813.8	2.3	97842.3	2.6
Եկամտահարկ	46828.4	1.5	53746.8	1.5	60204.7	1.9	73939.8	2.1	81210.6	2.2
Գույքահարկ	7469.4	0.2	7928.8	0.2	10263.4	0.3	11262.0	0.3	11793.6	0.3

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003», Եր., ՀՀ ԱՎԾ, 2003, էջ 388, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008», ՀՀ ԱՎԾ, Եր., 2008, էջ 354, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011», ՀՀ ԱՎԾ, Եր., 2011, էջ 385, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-մարտին», ՀՀ ԱՎԾ, Եր., 2012, էջ 11, «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2006-2011», Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2012, էջ 9-10:

Հողի հարկ	3299.7	0.1	3717.6	0.1	4974.3	0.2	4585.7	0.1	4429.0	0.1
Հաստատագրված վճարներ	17871.4	0.6	20341.2	0.6	23815.6	0.8	21976.4	0.6	20741.8	0.5
Արտոնագրային վճարներ	-	-	-	-	-	-	-	-	44.1	0.001
Պարզեցված հարկ	10038.7	0.3	6724.1	0.2	330.4	0.01	-	-	-	-

Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ բյուջետային եկամուտներից հարկերի, սոցիալական ապահովագրության վճարների, պետական սեփականությունից ստացվող եկամուտների, տույժերի, տուգանքների տեսակարար կշիռը Հայաստանի ՀՆԱ-ում 2011 թ. կազմել է 22.5%՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջին 28.4%-ի դիմաց<sup>2</sup>: Վերջինս հաստատագրում է այն փաստը, որ մեզանում շարունակում է կենսականորեն կարևոր մնալ ստվերային շրջանառության կրճատման լրջագույն հիմնախնդրի լուծումը:

Համաձայն Համաշխարհային բանկի «Doing Business 2013» հաշվետվության՝ հարկահավաքման ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը թեև որոշակիորեն բարելավել է իր դիրքերը, սակայն դեռևս չի մտնում լավագույն 100 երկրների ցանկի մեջ՝ զբաղեցնելով ոչ պատվաբեր 108-րդ տեղը<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է հարկվող շահույթի նկատմամբ հարկերի (բացառությամբ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) ու այլ պարտադիր վճարների ամփոփ տոկոսադրույքին, ապա այն 2012 թ. ՀՀ-ում կազմել է 38.8%, մինչդեռ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում՝ միջինը՝ 41.6%<sup>4</sup>: Եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ, ըստ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնահատականների, անցումային տնտեսությամբ երկրներում հարկատուի եկամուտների 2.1-6.8%-ը (ինչը կարելի է համարել կաշառային հարկի «դրույքաչափ») օգտագործվում է զանազան պաշտոնյաներին կաշառելու համար<sup>5</sup>, ապա ՀՀ-ում իրական հարկային բեռի մասին ամփոփ պատկերացումները կդառնան առավել համընդգրկուն և սպառիչ:

Անհրաժեշտ է արձանագրել նաև այն իրողությունը, որ, ըստ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, թե՛ կաշառային հարկի դրույքաչափերը և թե՛ դրա վճարման հաճախականությունը հետազոտված բոլոր երկրներում առավել բարձր են փոքր և միջին, քան խոշոր ձեռնարկություններում<sup>6</sup>:

Վերոհիշյալ վերլուծությունը, կարծում ենք, վկայում է այն մասին, որ ձեռնարկատիրության զարգացմանը, տնտեսական աճի խթանմանն ուղղված արմատական հարկային վերափոխման հետադիժը պետք է համարել

<sup>2</sup> Տե՛ս [data.worldbank.org/indicator/](http://data.worldbank.org/indicator/)

<sup>3</sup> Տե՛ս [www.doingbusiness.org/](http://www.doingbusiness.org/)

<sup>4</sup> Տե՛ս [data.worldbank.org/indicator/](http://data.worldbank.org/indicator/)

<sup>5</sup> Տե՛ս Վ. Լ. Հարությունյան և ուրիշներ. Հարկեր և հարկազանձում, Եր., 2010, էջ 122:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

տնտեսավարող սուբյեկտների հարկային բեռի որոշակի նվազեցումը: Այս առնչությամբ մեր հնարավոր ընդդիմախոսները կարող են առարկել, թե մի շարք զարգացած երկրներում բիզնեսի համար սահմանված հարկերի դրույթաչափերը էականորեն ավելի բարձր են, քան ՀՀ-ում, սակայն այնտեղ առկա են (մեր երկրի համեմատ) թե՛ ավելի փոքր ստվերային տնտեսություն (հասնելով ՀՆԱ-ի 7-15%), թե՛ հարկերից շատ ավելի մեծ բյուջետային մուտքեր: Այս առաջին հայացքից պարադոքսը բացատրվում է հետևյալ 2 կարևոր գործոնով՝

1) նշված երկրներում անվերապահորեն գործում է օրենքը, որի գործողության պարագայում ձեռնարկատերերը, որպես կանոն, չեն խուսափում հարկեր վճարելուց, քանի որ մի կողմից հարկային տեսուչները չեն համարձակվում գաղտնի գործարքի մեջ մտնել վերջիններիս հետ՝ հարկերի մասնակի վճարման նպատակով, մյուս կողմից՝ հարկավճարումից խուսափելու, ինչպես նաև նշված գործարքի համար սահմանված է անխուսափելի և խստագույն պատիժ, ընդհուպ մինչև քրեական պատասխանատվության ենթարկելը:

2) զարգացած երկրներում գոյություն ունի յուրօրինակ հետադարձ կապ պետական (տեղական) բյուջեի ու գործարարների միջև: Վերջիններս վստահ են, որ իրենց վճարած հարկերը, մաքսատուրքերը, այլ պարտադիր վճարները, մուտք գործելով բյուջե, որոշակի մասով իրենց ընտանիքներին կվերադարձվեն, մասնավորապես իրենց կենսաթոշակառու ծնողներին՝ ապահով կյանքով ապրելու հնարավորություն ընձեռող բարձր կենսաթոշակների վճարման տեսքով, իրենց երեխաներին՝ նրանց խնամքի համար միանգամայն բավարար նպաստների, իրենց մերձավորներին (նրանց հաշմանդամ կամ գործազուրկ լինելու պարագայում)՝ այնպիսի նպաստների տեսքով, որոնք նրանց տալիս են կենսաապահովման նվազագույն անհրաժեշտ պայմաններում ապրելու իրական հնարավորություն:

Քանի որ մեր երկրում դեռ չի ձևավորվել այնպիսի հարկաբյուջետային համակարգ, որի պարագայում կապահովվեն մեր գործարարների ընտանիքների կարիքավոր անդամների վերոհիշյալ կենսապայմանները, և հետևաբար բացակայում են բիզնեսի և պետության միջև նմանօրինակ սոցիալական գործընկերության հիմքերը, ուստի այդ գործարարները՝ որպես հարկատուներ, դեռևս իրենցը չեն համարում պետական բյուջեն, և արդ պատճառով չկան իրական շարժառիթներ հարկերը լրիվ վճարելու այդ բյուջեին: Եվ այս առնչությամբ նրանք պետության փոխարեն ինքնուրույնաբար են ապահովում իրենց հարազատների տարրական կենսամակարդակը՝ չվճարված հարկերն էլ դիտելով որպես յուրօրինակ փոխհատուցում դրա դիմաց: Մենք, անշուշտ, հեռու ենք այն մտքից, թե մեր գործարարները թաքցնում են իրենց իրական եկամուտները բացառապես իրենց ընտանիքների անդամների առաջնային կարիքները բավարարելու նպատակադրումով: Սակայն այն փաստը, որ այսօր հարկեր չվճարելը առավել շահավետ է, քան դրանք վճարելը, վստահաբար բխում է ՀՀ-ում հենց վերը նշված երկու գործոնի բացակայությունից:

Մեր կարծիքով, ՀՀ հարկային համակարգի բարեփոխման գերակա-

յությունը պետք է համարել տնտեսավարող սուբյեկտների (SU-ների), այդ թվում՝ փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների հարկային բեռի էական նվազումը, իսկ որոշ ոլորտներում և առանձին դեպքերում՝ նաև սահմանափակ ժամանակահատվածում «հարկային արձակուրդների» կիրառումը, քանզի հենց այդ հիմքի վրա երկրի տնտեսական զարգացումներում հնարավոր է ապահովել որակական ճեղքում, որի դրսևորումները կլինեն տնտեսության իրական հատվածում ներդրումային ակտիվության նշանակալի բարձրացումը, տնտեսական աճի խթանումը, բնակչության զբաղվածության շեշտակի ընդլայնումը, աղքատության էական կրճատումը և համաշխարհային շուկայում ամբողջ տնտեսության մրցունակության բարձրացումը: Ըստ այդմ՝ առաջարկում ենք.

1. երկու անգամ կրճատել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) դրույքաչափը (20%-ից իջեցնելով 10%-ի): Այս քայլը սկզբնական շրջանում, բնականաբար, կարող է հանգեցնել պետական բյուջեի դեֆիցիտի աճին, որը կարող էր կազմել մոտ 302 մլրդ դրամ<sup>7</sup>, եթե ԱԱՀ-ի դրույքաչափը նվազեցվեր 2013 թ.: Այս առնչությամբ նպատակահարմար է առանձնացնել նշված դեֆիցիտի ավելացումը կանխելու տնտեսական մեխանիզմի գործադրման երկու հնարավոր սցենար. առաջին դեպքում անհրաժեշտ է հարկային օրենսդրությունում կատարել համապատասխան փոփոխություն, համաձայն որի՝ **գործող SU-ները** նշված բարենպաստ հարկային ռեժիմից կարող են օգտվել, եթե նրանք կպարտավորվեն հաշվետու տարում ապահովել նախորդ տարում վճարված հարկերի և մաքսատուրքերի հանրագումարից առնվազն ոչ պակաս վճարումներ՝ դրա մասին մինչև հաշվետու տարվա սկիզբը հարկային տարածքային մարմնի հետ կնքելով համապատասխան համաձայնագիր: Այս սցենարի առավելությունն այն է, որ դրանով հնարավորություն է տրվում ԱԱՀ-ի կրկնակի կրճատմամբ չնվազեցնել բյուջեի հարկային եկամուտները, չավելացնել դրա դեֆիցիտը: Սակայն այս սցենարի թերությունն է, որ տվյալ պարագայում նախապայմաններ չեն ստեղծվում հաշվետու տարում պետբյուջեի եկամուտների աճի համար:

Առավել իրատեսական և փաստարկված կարելի է համարել երկրորդ սցենարը, ըստ որի՝ նպատակ է դրվում հաշվետու տարում (այն է՝ ԱԱՀ-ի դրույքաչափի կրճատման տարում) ապահովել պետբյուջեի նշված դեֆիցիտը ծածկող՝ պետբյուջեի մյուս հարկային եկամուտների, մասնավորապես՝ շահութահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքերի, ինչպես նաև բնօգտագործման վճարների հավելած (ΔԵ), որը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$\Delta \text{Ե} = \frac{\Delta \text{ՊԲԴ}}{\text{ՇՀ} + \text{ԵՀ} + \text{ԱՀ} + \text{ՍՏ} + \text{ԲԿ} + \text{ԱԱՀ}'} \times 100\% = \frac{\text{ԱԱՀ} - \text{ԱԱՀ}'}{\text{ՇՀ} + \text{ԵՀ} + \text{ԱՀ} + \text{ՍՏ} + \text{ԲԿ} + \text{ԱԱՀ}'} \times 100\% ,$$

որտեղ՝ ΔՊԲԴ-ն պետական բյուջեի դեֆիցիտի ակնկալվող աճի բացար-

<sup>7</sup> Հաշվարկվել է ՀՀ կառավարության 2013 թ. բյուջետային ուղերձում նշված ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքերի և բնօգտագործման վճարների գծով 2013 թ. համար կանխատեսվող տվյալների հիման վրա: ՀՀ կառավարության 2013 թ. բյուջետային ուղերձ // [www.minfin.am](http://www.minfin.am)

ծակ մեծությունն է, ՇՀ-ն, ԵՀ-ն, ԱՀ-ն, ՄՏ-ն և ԲՎ-ն՝ համապատասխանաբար՝ շահութահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքերի և բնօգտագործման վճարների հաշվետու տարվա մեծությունները: Վերջիններս այն բյուջետային եկամուտներն են, որոնց աճը կարող է ապահովել պետբյուջեի դեֆիցիտի մեծացման փոխհատուցում և ի հաշիվ ՏՄ-ների իրացման շրջանառության ավելացման: Դժվար չէ կռահել, որ տվյալ հաշվարկում հիշյալ բյուջետային եկամուտների մեջ չեն ներառվում այն հարկատեսակները, որոնց մեծությունները կապված չեն ՏՄ-ների շրջանառության ծավալների աճի հետ (օրինակ՝ գույքահարկը, հողի հարկը, հաստատագրված և արտոնագրային վճարները),

ԱԱՀ-ն՝ ԱԱՀ-ի դրույքաչափի կրճատմամբ պետբյուջեում ԱԱՀ-ի նվազեցման ակնկալվող գումարը: Հարկ է նշել, որ ՏՄ-ների իրացման շրջանառության աճին զուգընթաց չի կարող չաճել նաև այս ցուցանիշը, ուստի այն ևս պետք է ներառվի բերված բանաձևի հայտարարում.

ԱԱՀ-ն՝ հաշվետու տարվա ԱԱՀ-ն:

2013 թ. համապատասխան տվյալների հիման վրա մեր կատարած հաշվարկներով  $\Delta$ -ն հավասար կլինի մոտ 52%-ի, այսինքն՝ այսքան պետք է աճի վերոհիշյալ բյուջետային եկամուտների հանրագումարը, որպեսզի ապահովվի ԱԱՀ-ի նվազման հետևանքով պետբյուջեի դեֆիցիտի ավելացման ծածկում:

Այս հիմնախնդրի լուծման համար ևս անհրաժեշտ է հարկային օրենսդրությունում կատարել համապատասխան փոփոխություն, ըստ որի՝ գործող ՏՄ-ները նշված հարկային ռեժիմից կարող են օգտվել պայմանով, որ նրանք կպարտավորվեն իրենց իրացման շրջանառությունը և, հետևապես, հարկերի, մաքսատուրքերի և բնօգտագործման վճարների հանրագումարը հաշվետու տարում ավելացնել առնվազն 25%-ով՝ դրա մասին մինչև հաշվետու տարվա սկիզբը հարկային տարածքային մարմնի հետ կնքելով համաձայնագիր: Այս կերպ հնարավոր կլինի ծածկել պետբյուջեի դեֆիցիտի ակնկալվող աճի շուրջ 48%-ը ( $25\%:52\% \times 100\%$ ): Քանի որ, ըստ Համաշխարհային բանկի վերջին տվյալների, ստվերային շրջանառությունը ՀՀ-ում կազմում է 41.1%<sup>8</sup>, իսկ ըստ անկախ փորձագետների՝ մոտ 50%, ուստի ՏՄ-ները կարող են մոտ 1.4-2 անգամ ավելի ցույց տալ իրենց հարկվող շրջանառությունը՝ առանց մեծացնելու իրենց ապրանքների (ծառայությունների) իրացման փաստացի ծավալները: Ուստի ընդամենը 25%-ով շրջանառության աճը նրանց համար լուրջ հիմնախնդիր չի կարող լինել: Ինչ վերաբերում է նոր ստեղծվող ՏՄ-ներին, ապա նրանք, անշուշտ, այս բարենպաստ հարկային ռեժիմից կարող են օգտվել առանց վերոհիշյալ վերապահման:

Պետբյուջեի դեֆիցիտի ավելացման մնացած 52%-ը, որը համարժեք է մոտ 157 մլրդ դրամի, կարող է փոխհատուցվել՝

ա) այս բարենպաստ պայմաններում նոր ստեղծվող շատ ձեռնարկությունների, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումներով ընկերությունների ստեղծմամբ ու գործունեության խրախուսմամբ և դրանց կողմից լրացու-

<sup>8</sup> Տե՛ս [www-wds.worldbank.org/servlet/WDSContentServer/WDSP/IB/2010/10/14/00015834920101014160704/Rendered/PDF/WPS5356.pdf](http://www-wds.worldbank.org/servlet/WDSContentServer/WDSP/IB/2010/10/14/00015834920101014160704/Rendered/PDF/WPS5356.pdf)

ցիչ հարկային վճարումների կատարմամբ, ինչը եապես կավելացնի բյուջեի եկամտային մասը,

բ) պետբյուջեի, մասնավորապես՝ պետական կառավարման, ընդհանուր բնույթի ծառայությունների, ընդհանուր բնույթի տնտեսական հարաբերությունների, ճանապարհային տրանսպորտի, հեռուստատեսային ծառայությունների և այլնի գծով ծախսերի մեկ քառորդով կրճատմամբ, որի հաշվին բյուջեի դեֆիցիտը կնվազի մոտ 35 մլրդ դրամով,

գ) որոշ դեպքերում գույքահարկի, ակցիզային հարկի, հաստատագրված վճարների դրույքաչափերի բարձրացմամբ<sup>9</sup>: Մասնավորապես, անհրաժեշտ է գույքահարկի հաշվարկման դեպքում սահմանել չհարկվող նվազագույն շեմ (ասենք՝ մեկ շնչի հաշվով 15-20 քմ ընդհանուր մակերես)<sup>10</sup>, որը գերազանցող առաջին 100 քմ մակերեսի (անհատական տան դեպքում՝ ըստ նշված մակերեսի՝ հաշվարկելով դրա ծավալը խորանարդ մետրերով) պարագայում գույքահարկի դրույքաչափը բարձրացնել 3 անգամ, երկրորդ 100 քմ-ի համար՝ 5 անգամ, երրորդ 100 քմ-ի համար՝ 7 անգամ, չորրորդ և հաջորդ 100 քմ-երի համար՝ 10 անգամ<sup>11</sup>:

Բացի դրանից՝ նպատակահարմար է նաև փոփոխություն կատարել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում՝ նախատեսելով, որ ակցիզային հարկը մինչև 7 տարին թողարկման տարեթիվ ունեցող ներմուծվող թեթև մարդատար ավտոմեքենաների համար սահմանվում է 8 մլն 220 հազ. դր. (որը համարժեք է 20 հազ. \$) մաքսային արժեքից մինչև 12 մլն 330 հազ. դր. (30 հազ. \$)՝ դրանց մաքսային արժեքի 10%-ի չափով, վերջին գումարից մինչև 16 մլն 440 հազ. դր. (40 հազ. \$)՝ մաքսային արժեքի 15%-ը, վերջին գումարից մինչև 20 մլն 550 հազ. դր. (50 հազ. \$)՝ 20%-ը, 20 մլն 550 հազ. դրամից մինչև 26 մլն 460 հազ. դր. (60 հազ. \$)՝ 25% և վերջին գումարի գերազանցման դեպքում՝ 30%:

Հարկ է առավել խստացնել հարկման ֆիսկալ գործառույթը նաև խաղատների և շահումով խաղերով զբաղվող ՏՄ-ների նկատմամբ՝ կրկնապատկելով դրանց համար սահմանված հաստատագրված վճարների չափը: Այս կետում նշված քայլերի շնորհիվ, մեր գնահատմամբ, կարելի է պետբյուջեի դեֆիցիտը կրճատել մոտ 28 մլրդ դրամով,

դ) պետության երաշխավորությամբ մոտ 40-45 մլրդ դրամի հուսալի պետական պարտատոմսերի (1-ից մինչև 3 տարվա մարման ժամկետով և տարեկան 10-12% տոկոսադրույքով) ՏՄ-ների և բնակչության շրջանում

<sup>9</sup> Գույքահարկի այս բարձրացումով ապահովված համայնքային բյուջեների եկամտային մասի էական աճը հնարավորություն կընձեռի նույնքանով կրճատել պետբյուջեից համայնքների բյուջեներին տրվող դոտացիաները, ինչը կհանգեցնի պետբյուջեի ծախսերի և հետևապես նաև դեֆիցիտի կրճատմանը:

<sup>10</sup> Նման առաջարկի իրականացումը կնպաստեր, որ գույքահարկ վճարող հիմնականում կհամարվեն իրապես ճոխ, շքեղ բնակելի անշարժ գույքի սեփականատերերը, այլ ոչ թե նվազագույն բնակելի պայմաններ ունեցող մարդիկ:

<sup>11</sup> Այս առումով բացարձակապես անտրամաբանական և հետևապես անընդունելի է այն հանգամանքը, որ, ըստ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի, բնակարանի և անհատական բնակելի տան (այդ թվում՝ դղյակի, ապարանքի) նույն մակերեսները նույն կադաստրային արժեքն ունեն, մինչդեռ անհատական բնակելի տան որոշակի մակերեսի կադաստրային արժեքը պետք է լիներ ավելի բարձր, քան բնակարանի նույն չափի մակերեսի արժեքը:



տեղաբաշխմամբ՝ ներգրավված փոխառու միջոցները հնարավորինս ուղղելով բյուջետային վարկերի տրամադրմանը 12-13% տոկոսադրույքով հիմնականում էկոնոմիկայի իրական հատվածի զարգացմանը, ինչից հենց նույն տարում կարելի է ակնկալել լրացուցիչ տնտեսական աճ և հետևապես լրացուցիչ հարկային մուտքեր պետբյուջե,

ե) պետբյուջեի դեֆիցիտի աճի չեզոքացման մնացած գումարի համարժեքի, այն է՝ մոտ 130 մլն ԱՄՆ դոլարի եվրապարտատոմսերի (10-15 տարվա մարման ժամկետով և տարեկան 6-8% տոկոսադրույքով) արտասահմանում, մասնավորապես հոծ հայություն ունեցող երկրներում տեղաբաշխումից ստացված արտարժույթային միջոցների ներգրավմամբ, որոնք, ի թիվս այլ ուղղությունների, կարելի է որպես բյուջետային վարկեր տրամադրել տնտեսության գերակա ճանաչված ճյուղերի, ոլորտների զարգացման և կազմակերպությունների արտահանման գործունեության խրախուսման համար:

Այս կապակցությամբ նշենք, որ վերջերս ՀՀ կառավարությունը իրականացրել է 700 մլն \$ չափով եվրապարտատոմսերի (եվրաբոնդերի) համաշխարհային ֆինանսական շուկայում տեղաբաշխման ծրագիր: Ցավով պետք է արձանագրել, որ ստացվելիք փոխառու միջոցներով նախատեսվում է հիմնականում մարել Ռուսաստանից ստացված 500 մլն դոլարի վարկը, ինչը վկայում է այդ վարկային ռեսուրսների ոչ նպատակային, ոչ արդյունավետ օգտագործման մասին:

2. ԱԱՀ-ից և շահութահարկից (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ եկամտային հարկից) ազատել.

ա) նոր ստեղծված փոքր ձեռնարկատիրության սուբյեկտներին՝ իրենց գործունեության առաջին 3 տարվա ընթացքում, որոնք չեն հիմնվել ի հաշիվ գործող SU-ի վերակազմակերպման կամ լուծարման և չեն համարվում գործող SU-ների հետ փոխկապակցված անձինք, և որոնք զբաղվում են՝

- սկզբունքորեն նոր տեխնիկայի, տեխնոլոգիայի, նոր նյութերի ստեղծմամբ,

- թափոնների և երկրորդային ռեսուրսների օգտագործմամբ արտադրանքի թողարկմամբ,

- գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքներով և ինովացիոն գործունեությամբ,

բ) լեռնային և սահմանամերձ բնակավայրերում (գյուղերում) նոր ստեղծվող արտադրական SU-ները՝ իրենց գործունեության առաջին 3 տարվա ընթացքում, որոնք չեն հիմնվել ի հաշիվ գործող SU-ի վերակազմակերպման կամ լուծարման և չեն համարվում գործող SU-ների հետ փոխկապակցված անձինք,

գ) վենչուրային ֆոնդերը, գիտահիմնովացիոն կենտրոնները, բիզնես-ինկուբատորները, տեխնոպարկերը՝ իրենց գործունեության առաջին 2 տարվա ընթացքում, որոնք չեն հիմնվել ի հաշիվ գործող SU-ի վերակազմակերպման կամ լուծարման և չեն համարվում գործող SU-ների հետ փոխկապակցված անձինք,

դ) իրական հատվածի մասնավորեցված ձեռնարկությունները՝ դրանց վերականգնված գործունեության առաջին 2 տարվա ընթացքում, եթե

դրանք հարկային այս նոր ռեժիմ սահմանելու տարվանը նախորդող տարվա ընթացքում ընդհանրապես չեն գործել: Այս քայլը ևս մեծապես կնպաստեր դրանցում ներդրումների ներգրավման համար հրապուրիչ պայմանների ստեղծմանը, տնտեսական աճին և բյուջեի եկամուտների ավելացմանը:

3. ԱԱՀ-ից ազատել.

ա) ՀՀ-ում ներմուծումափոխարինող ապրանքների թողարկման և իրացման ծավալը (այդ ապրանքների ցանկը յուրաքանչյուր տարի որոշում է ՀՀ կառավարությունը՝ ըստ ՀՀ ներմուծման ընդհանուր ծավալի մեջ դրանց բարձր տեսակարար կշռի),

բ) միայն մեկ և ավելի տարի ժամկետով տրված վարկերի ծավալը (բայց ոչ ընդհանրապես վարկերի տրամադրումը, որն այժմ ազատված է ԱԱՀ-ից):

4. Շահութահարկից (եկամտային հարկից) ազատել.

ա) արտադրական SU-ների առաջին անհրաժեշտության ապրանքների, դեղամիջոցների ֆիզիկական հավելաճը (եթե այդ հավելաճից հետո արձանագրվել է ծավալների կրճատում, ապա դրանից հետո չի հարկվի այն հավելաճը, որը ապահովվել է կրճատումից առաջ արտադրանքի ձեռք բերված բացարձակ մեծության նկատմամբ),

բ) բարձր տեխնոլոգիաներին, տեխնոլոգիական արդիականացմանը ուղղվող ներդրումները<sup>12</sup>,

գ) նոր ստեղծվող այն SU-ները, որոնք իրականացնում են գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ և այդ տեխնիկայի իրացում գյուղացիական տնտեսություններին՝ նշված SU-ների աշխատանքի առաջին 2 տարվա ընթացքում:

Ներկայումս միանգամայն գերակա խնդիր է օրենսդրորեն խրախուսել ոչ թե ընդհանրապես օտարերկրյա ներդրումների ներգրավումը, ինչը նախատեսված էր «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով, այլ հենց զարգացած երկրներից կամ ՀՀ ռազմավարական գործընկեր երկրներից ներդրումների իրականացման տնտեսական մեխանիզմի արմատավորումը: Այս առումով եթե արտադրական ոլորտի ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողի ներդրման գումարը կազմում է 5-10 մլն \$ (կամ՝ դրան համարժեք դրամային գումար), ապա նպատակահարմար է ռեզիդենտի շահութահարկը նվազեցնել 50%-ով, իսկ եթե կազմում է 10 և ավելի մլն \$՝ 100%-ի չափով:

3. Գույքահարկից ազատել.

ա) արտադրական նշանակության շինությունները,

բ) ինովացիոն գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների շինությունները,

գ) արտադրական ոլորտի SU-ների բեռնատար ավտոմեքենաները, եթե դրանք օգտագործվում են միայն տվյալ արտադրությունների պրոֆիլին համապատասխան:

<sup>12</sup> Ակադեմիկոս Ա. Աղանբեգյանը առաջարկում է հարկումից ազատել կազմակերպությունների՝ բոլոր տիպի ներդրումներին ուղղվող միջոցները (տե՛ս Аганбегян А. Кризис: Беда и шанс для России. М., 2009, էջ 265):

Ներկայացված առաջարկությունները կնպաստեն ձեռնարկատիրական միջավայրի զարգացման համար առավել գրավիչ պայմանների ստեղծմանը, դրական տնտեսական աճի ապահովմանը, դրա ինտենսիվության և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ստվերային շրջանառության էական կրճատմանը:

**ГАРЕГИН ШМАВОНЯН – Пути реформирования налоговой системы, стимулирующей предпринимательство в РА.** – В наши дни актуализируется необходимость радикально преобразовать налоговую систему, посредством этого сформировать привлекательную бизнес-среду и обеспечить качественный экономический рост. В статье утверждается, что бесконечное “совершенствование” налогового администрирования исчерпало себя, не способно сократить теневой оборот и содействовать существенному росту экономики, поскольку нынешняя налоговая система несёт в себе не столько стимулирующую, сколько фискальную функцию. Выявлены факторы, обуславливающие радикальную налоговую реформу, которая должна снизить налоговую нагрузку на бизнес, предоставить ему на ограниченный период “налоговые каникулы”, что и обеспечит качественный рывок в экономическом развитии. Предложены основные пути реформирования в Армении налоговой системы.

**GAREGIN SHMAVONYAN – Ways of Reforming Entrepreneurship Stimulation Tax System in RA.** – The contemporary period of Armenia’s socio-economic development actualizes the problems of tax system radical reform aimed at the attractive business environment formation, qualitative economic growth ensuring. The author substantiates exhausting of tax administration infinite “improving” that cannot facilitate shadow circulation decrease, economy growth basically because of action of fiscal but not incentive function of tax system. In this connection the article reveals profound factors stipulating radical tax reform priority. Decrease of tax burden, giving “tax holidays” are considered as a tax reform pivotal vector because just the latter can insure qualitative breakthrough in economic development. The author also propounds the basic ways of Armenia’s tax system reforming.